**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2**

29.09.2025 թվականին կնքված N ԵԱ-ԳՀԱՇՁԲ-25/49 գնման պայմանագրի

ք. Երևան «25» հունվարի 2026թ.

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Բ. Կիրակոսյանի, ով գործում է «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արեգ Շին» ՍՊԸ և «Ալ-Մասքա» ՍՊԸ կոնսորցիումը, ի դեմս «Արեգ Շին» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Խլղաթյանի, ով գործում է «Արեգ Շին» ՍՊԸ-ի կանոնադրության և 2025թ-ի օգոստոսի 24-ին կնքված N 25/08 համատեղ գործունեության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու) ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 29.09.2025թ. կնքված N ԵԱ-ԳՀԱՇՁԲ-25/49 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1, 8.5 և 8.8 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի 5.1 կետը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ. «Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 22,977,174.00 (քսաներկու միլիոն ինը հարյուր յոթանասունյոթ հազար մեկ հարյուր յոթանասունչորս) ՀՀ դրամ, որից 3,829,529.00 (երեք միլիոն ութ հարյուր քսանինը հազար հինգ հարյուր քսանինը) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:»:

1.2 Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ը փոփոխել և հաստատել նոր խմբագրությամբ համաձայն սույն համաձայնագրի Հավելված 1-ի:

1.3 Պայմանագրի Հավելված 1.1-ին կից՝ ավելացված աշխատանքների մասով, հաստատել աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշիվը համաձայն սույն համաձայնագրի Հավելված 2-ի:

1.4 Պայմանագրի Հավելված 3-ով և կողմերի միջև 28.12.2025թ. կնքված համաձայնագիր 1-ի Հավելված 2-ով հաստատված վճարման ժամանակացույցերը փոփոխել և հաստատել նոր խմբագրությամբ, համաձայն սույն համաձայնագրի Հավելված 3-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1, 2, 3 հավելվածները հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՊԱԼԱՌՈՒ** |
|---|---|
| «Երևանի ավտոբուս» ՓԲԸ | «Արեգ Շին» ՍՊԸ և «Ալ-Մասքա» ՍՊԸ կոնսորցիում |
| ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 5 | ք.Երևան Նոր Նորքի 7-րդ զանգված 22շ.24բն. |
| «Հայէկոնոմբանկ» ՓԲԸ | «Ակբա բանկ» ԲԲԸ |
| Հ/Հ 163078035496 | Հ/Հ 220293280339000 |
| ՀՎՀՀ 00875439 | ՀՎՀՀ 01016489 |

Տնօրեն՝

------------------------- Բ. Կիրակոսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

«Արեգ Շին» ՍՊԸ-ի տնօրեն՝

------------------------- Ա.Խլղաթյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1
«16» հուլիսի2025թ. կնքված
N ԵԱ-ԳՀԱՇՁԲ-25/49 ծածկագրով պայմանագրի
«23» հունվարի 2026թ. կնքված
թիվ 2 համաձայնագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Աշխատանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միջանցիկծած կագիր՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Հատկանիշները (տեխնիկական բնութագիր) | Չափման միավորը | Ընդհանուր քանակը | Գումար | Կատարման | |
| | | | | | | | Հասցեն | Ժամկետը |
| 1 | 45221142/501 | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի վարչական շենքի 3-րդ հարկի հարկաբաժանի վերանորոգման աշխատանքներ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի վարչական շենքի 3-րդ հարկի հարկաբաժանի վերանորոգման աշխատանքներ իրականացում, համաձայն՝ Հավելված 1.1-ի: Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ բոլոր նյութերը, գործիքները, տրանսպորտային միջոցները ապահովում է կատարողը/կապալառուն իր միջոցներով, համաձայն՝ Հավելված 1.2-ով ներկայացվող աշխատանքների կատարման համար պահանջվող մեքենա սարքավորումների, տեխնիկական միջոցների ցանկի: Նախատեսված աշխատանքների կատարման համար պահաջվում է՝ «Շինարարության իրականացում» առնվազն 2-րդ դասի լիցենզիա՝ բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ, «էլեկտրամատակարարում» (Էլեկտրամատակարարմա, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման | դրամ | 1 | 22,977,174.00 | ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 | Կողմերի միջև պայմանագիրն ուժի մեջ մտնելու, ինչպես նաև տեխնիկական հսկողության պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 120 օրացուցային օրվա ընթացքում՝ համաձայն Հավելված թիվ 2.1-ով ներկայացվող օրացուցային գրաֆիկի |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | համակարգեր, ֆոտովոլտային և հողմաէներգետիկ կայաններ), «ջերմագազամատակարարում և օդափոխություն» (օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր, ձերմատակարարման և գազամատակարարման համակարգեր), «ջերմամատակարարում և ջրահեռացում» (ջերմամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմոլորացիա) ներդիրներով և արտաքին ցանցեր, հիդրոմոլորացիա) ներդիրներով: | | | | | |
| **Ընդամենը՝** | | | | | 22,977,174.00 | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«Երևանի ավտոբուս» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 5
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Հ/Հ 163078035496
ՀՎՀՀ 00875439

Տնօրեն՝

--------------------------------- Բ. Կիրակոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«Արեգ Շին» ՍՊԸ և «Ալ-Մասքա» ՍՊԸ
կոնսորցիում
ք.Երևան Նոր Նորքի 7-րդ զանգված 22շ.24բն.
«Ակբա բանկ» ԲԲԸ
Հ/Հ 220293280339000
ՀՎՀՀ 01016489

«Արեգ Շին» ՍՊԸ-ի տնօրեն՝

--------------------------------- Ա.Խլղաթյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N 2*
*«16» հուլիսի2025թ. կնքված*
*N ԵԱ-ԳՀԱՇՁԲ-25/49 ծածկագրով պայմանագրի*
*«23» հունվարի 2026թ. կնքված*
*թիվ 2 համաձայնագրի*

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

## «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-Ի ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ 3-ՐԴ ՀԱՐԿԻ ՀԱՐԿԱԲԱԺԱՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

/ավելացված աշխատանքների մասով/

| NN | Աշխատանքների անվանումը | չ/մ | ծավալը | Միավորի արժեքը | Միավորի արժեքը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | | 5 | 6 |
| 1 | Կախովի առաստաղի պատրաստում «Արմստրոնգ» տիպի, մետաղական հիմնակմախքով | մ$^2$ | 49.0 | | 6.91 | 338.75 |
| 2 | Լամինատե հատակի պատրաստում AC 5 դասի, 8մմ /ներառյալ սպունգը/ | մ$^2$ | 127.0 | | 7.75 | 984.08 |
| 3 | Պլաստմասե շրիշակների պատրաստում H=70մմ, իր կցամասերով | գմ | 92.5 | | 0.92 | 85.24 |
| 4 | Գիպսաստվարաթղթե 12.5մմ հաստ. Սալերով երեսպատում, մետաղական հիմնակմախքի պատրաստմամբ | մ$^2$ | 34.0 | | 5.80 | 197.04 |
| 5 | Երկտեղ խոհանոցակոնքերի տեղադրում, սիֆոնով և ծորակ-խառնիչով, պահարանով | կ-տ | 1.0 | | 72.35 | 72.35 |
| 6 | Եռաֆազ վարդակների տեղադրում | հատ | 4.0 | | 4.12 | 16.49 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| 7 | Միաֆազ ավտոմատ անջատիչի տեղադրում 40Ա | հատ | 9.0 | | 3.57 | 32.16 |
| 8 | Եռաֆազ ավտոմատ անջատիչի տեղադրում 100Ա | հատ | 1.0 | | 5.25 | 5.25 |
| | <u>Սարքավորումների /արժեքը/</u> | | | | | |
| 1 | Միաֆազ ավտոմատ անջատիչ 40Ա | հատ | 9 | | 2.03 | 18.27 |
| 2 | Եռաֆազ ավտոմատ անջատիչ 100Ա | հատ | 1 | | 25.38 | 25.38 |
| | **Ընդամենը** | | | | | **1775.00** |
| | **ԱԱՀ 20%** | | | | | **355** |
| | **Ընդամենը** | | | | | **2130.00** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«Երևանի ավտոբուս» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 5
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Հ/Հ 163078035496
ՀՎՀՀ 00875439

Տնօրեն՝

------------------------ Բ. Կիրակոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«Արեգ Շին» ՍՊԸ և «Ալ-Մասքա» ՍՊԸ
կոնսորցիում
ք.Երևան Նոր Նորքի 7-րդ զանգված 22շ.24բն.
«Ակբա բանկ» ԲԲԸ
Հ/Հ 220293280339000
ՀՎՀՀ 01016489

«Արեգ Շին» ՍՊԸ-ի տնօրեն՝

------------------------ Ա.Խլղաթյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N 3*
*«29» սեպտեմբերի 2025թ. կնքված*
*N ԵԱ-ԳՀԱՇՁԲ-25/49 ծածկագրով պայմանագրի*
*«29» հունվարի 2026թ. կնքված*
*թիվ 2 համաձայնագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| չ/հ | միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման | անվանումը | չ/մ | ընդհանուր քանակը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025-2026թթ.՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | | Ընդհանուր գինը |
| | | | | | 2025թ. | | | | | | | | | | | | 2026թ. | |
| | | | | | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | I - XII | |
| 1 | 45221142/501 | Վարչական շենքի 3-րդ հարկի վերանորոգման աշխատանքներ | դրամ | 1 | - | - | - | - | - | - | - | - | 21,300,000.00 | 21,300,000.00 | 21,300,000.00 | 21,300,000.00 | 22,977,174.00 | 22,977,174.00 |
| **Ընդամենը՝** | | | | | | | | | | | | | | | | | | 22,977,174.00 |

*Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի հրապարակված, փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով: Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«Երևանի ավտոբուս» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 5
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Հ/Հ 163078035496
ՀՎՀՀ 00875439

Տնօրեն՝
------------------------ Բ. Կիրակոսյան
(ստորագրություն)

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«Արեգ Շին» ՍՊԸ և «Ալ-Մասքա» ՍՊԸ
կոնսորցիում
ք.Երևան Նոր Նորքի 7-րդ զանգված 22շ.24բն.
«Ակբա բանկ» ԲԲԸ
Հ/Հ 220293280339000
ՀՎՀՀ 01016489

«Արեգ Շին» ՍՊԸ-ի տնօրեն՝
------------------------ Ա.Խլղաթյան
(ստորագրություն)
Կ.Տ.